

ՀՀ Ֆինանսների նախարարություն

Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 5/8

10 փետրվարի 2015 թ.

Քննարկվեց «ԷՄ Ջի դիզայն» ՍՊԸ-ի դիմում-գանգատը պետական տուրքի գումարը ժամանակին վճարելու, սակայն ՀՀ բյուջեի համապատասխան հաշվեհամարին ուշ մուտքագրվելու հետևանքով ընկերության նկատմամբ տույժ հաշվարկելու վերաբերյալ:

«ԷՄ Ջի դիզայն» ՍՊԸ-ի դիմում-գանգատում բերված փաստարկները.

«ԷՄ Ջի դիզայն» ՍՊԸ-ն (այսուհետ Ընկերություն) քաղաքաշինության բնագավառի 2013թ. դեկտեմբերի 25-ին տրված՝ 15747 լիցենզիային կից 02, 03, 04, 05 ներդիրների համար նախատեսված տարեկան պետական տուրքը վճարել է 2014թ. դեկտեմբերի 25-ին՝ «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի համաձայն, սակայն ՀՀ պետական գանձապետարանի համապատասխան հաշվեհամարին այն մուտքագրվել է 2 օր անց՝ 27.12.2014թ.: Այդ իսկ պատճառով ընկերության նկատմամբ հաշվարկվել է տույժ:

Ելնելով վերոգրյալից՝ ընկերությունը խնդրում է պետական տուրքի գումարը սահմանված ժամկետում վճարելու, սակայն այն ՀՀ բյուջեի համապատասխան հաշվեհամարին ուշ մուտքագրվելու համար տույժ չհաշվարկել:

ՀՀ Ֆինանսների նախարարության հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի եզրակացությունը.

ՀՀ ՖՆ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով)՝ ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները, եկավ հետևյալ եզրակացության:

Քննարկման ընթացքում նշվեց, որ «ԷՄ Ջի դիզայն» ՍՊԸ-ի կողմից քաղաքաշինության բնագավառի 2013թ. դեկտեմբերի 25-ին տրված՝ 15747 լիցենզիային կից 02, 03, 04, 05 ներդիրների համար նախատեսված տարեկան պետական տուրքի գումարը՝ 160.000 դրամ վճարել է 2014 թ-ի դեկտեմբերի 25-ին, համաձայն «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի: Սակայն ՀՀ պետական գանձապետարանի համապատասխան հաշվեհամարին նշված գումարը մուտքագրվել է միայն 2 օր անց՝ 27.12.2014 թ-ին: Արդյունքում, պետական տուրքի գծով հաշվարկվել է տույժ 1600 դրամի չափով:

Վերոգրյալի կապակցությամբ հարկ է նշել, որ «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի համաձայն՝ պետական տուրքի վճարման՝ իրավաբանական անձանց պարտավորությունը դադարում է այդ պարտականության կատարումով, պետական տուրքի վճարումից ազատումով, պետական տուրքի վերացումով կամ օրենքով սահմանված այլ հիմքերով, իսկ ֆիզիկական անձանց համար՝ պարտավորության կատարումով, պետական տուրքի վճարումից ազատումով, պետական տուրքի վերացումով կամ պետական տուրք վճարողի մահվան դեպքում:

Միաժամանակ «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 6¹ հոդվածի 1-ին կետով հստակ սահմանված է, որ անկախ սույն օրենքի 6 հոդվածում նշված դրույթներից՝ ֆիզիկական անձանց և կազմակերպությունների հերթական տարեկան պետական տուրքի վճարման պարտավորությունը դադարում է՝

1) այդ պարտավորության կատարմամբ՝ սույն օրենքով սահմանված դրույթաչափերով ու ժամկետներում հերթական տարեկան պետական տուրքի գումարների (պետական տուրքի գումարը համարվում է վճարված Հայաստանի Հանրապետության բյուջեի համապատասխան հաշվին հաշվեգրվելու օրվանից), ինչպես նաև դրանց վճարումն ուշացնելու համար սույն օրենքով սահմանված տույժերի գումարների վճարմամբ, տարեկան պետական տուրքի վճարումից ազատումով, օրենքով տարեկան պետական տուրքի վերացմամբ, ինչպես նաև՝ ֆիզիկական անձի մահվան դեպքում.

Քննարկվող դեպքում ընկերության կողմից «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքով սահմանված տարեկան պետական տուրքի գումարը ՀՀ բյուջեի համապատասխան հաշվեհամարին է մուտքագրվել 27.12.2014թ.-ին, այսինքն՝ օրենքով սահմանված ժամկետից (25.12.2014թ.) երկու օր անց: Արդյուքում, խախտվել է վերոնշյալ օրենքով սահմանված հերթական տարեկան պետական տուրքի վճարման ժամկետը, որի հետևանքով պետական տուրքի գումարը ժանակին չվճարելու համար սահմանված կարգով հաշվարկվել է տույժ:

Ելնելով վերոգրյալից՝ Հանձնաժողովը գտնում է, որ տվյալ դեպքում պետական տուրքի գծով տույժի գումարը հաշվարկվել է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի և «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

«Էմ Զի դիզայն» ՍՊԸ-ի գանգատը մերժել:

Սույն որոշմանը չհամաձայնվելու դեպքում այն ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան:

Հանձնաժողովի նախագահ



Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ